ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

3301ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

Որոշում

"24" դեկտեմբեր 2013թ. № 183

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով,համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ.մայիսի 20-ի«Գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագրի» N19 արձանագրային որոշման 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թ. հունիսի 12-ի N51Ա/1 և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար,փոխվարչապետի 2012թ. հունիսի 18-ի N78Ա համատեղ հրամանի. **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կանոնադրությունը համաձայն N1 հավելվածի:

2) Գենդերային հանձնաժողովի անհատական կազմը համաձայն N2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 21-ի «Գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 114Ա որոշումը:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ Սյունիքի մարզպետ Վ.Հակոբյան

2013թ, դեկտեմբերի 24
ք.Կապան

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. դեկտեմբերի 24-ի N 183

Կազմը
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի

Աշոտ Մարդյան	ՀՀ Սյունիքի փոխմարզպետ /հանձնաժողովի նախագահ/
Նաիրա Ավանեսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Սեյրան Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀԾ գործունեության համակարգման վարչության պետ
Կառլեն Կոզմանով	ՀՀ Սյունիք մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Արփինե Քարամյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց,երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի քարտուղար/
Արամ Շահնազարյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ,սոցիալական ապահովության բաժնի պետ
Ռուզաննա Տոռոզյան	«Գորիսի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ տնօրեն /համաձայնությամբ/
Սրբուհի Գրիգորյան	Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու անդամ /համաձայնությամբ/
Արմինե Հակոբյան	«Կապանի ֆերմերների ասոցացիա» ՀԿ տնօրեն /համաձայնությամբ/

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. դեկտեմբերի 24-ի N 183

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովը խորհրդատվական մարմին է,որը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի որոշմամբ:
2.Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել Սյունիքի մարզպետարանի շահագրգիռ ստորաբաժանումների,տեղական ինքնակառավարման մարմինների,հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և անկախ փորձագետներ:
3.Հանձնաժողովի աշխատանքը համակարգում է Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը:
4.Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ սահմանադրությամբ,ՀՀ օրենքներով,ՀՀ նախագահի հրամանագրերով և կարգադրություններով,ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով, Սյունիքի մարզպետի որոշմամբ,այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
5.Սույն կանոնադրությամբ սահմանվում են հանձնաժողովի նպատակը և հիմնական խնդիրները,աշխատանքների կազմակերպումը,հանձնաժողովի նախագահի,անդամների և քարտուղարի պարտականությունները,գործունեության դադարեցման կարգը,ինչպես նաև նիստերի վարման և որոշումների ընդունման կարգը,պայմաններն ու սահմանները:
6.Հանձնաժողովը հաշվետու է ՀՀ Սյունիքի մարզպետին և մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 15-ը նրան է ներկայացնում տեղեկատվություն իր կողմից կատարված աշխատանքների մասին:Հանձնաժողովը նաև յուրաքանչյուր տարի մինչև հունվարի 31-ը Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության լիազոր մարմին է ներկայացնում տեղեկատվություն նախորդ տարվա կատարված աշխատանքների մասին:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7.Հանձնաժողովի նպատակն է աջակցել Սյունիքի մարզում գենդերային հարցերով պետական քաղաքականության իրականացմանը,նպաստել Հայաստանի հանրապետությունում գենդերային քաղաքականությանը ուղղված ռազմավարական ծրագրերի իրագործմանը:

8.Հանձնաժողովի խնդիրներն են.

1) գենդերային պետական քաղաքականությանը համահունչ՝ Սյունիքի մարզում գենդերային քաղաքականության և գենդերային բռնության դեմ պայքարի ամենամյա,տարեկան ծրագրերի մշակումը և դրանց իրականացմանն ուղղված աշխատանքների աջակցելը,

2) համայնքներում գենդերային քաղաքականության ներուղղման իրականացմանն աջակցելը,

3) մարզում գործող շահագրգիռ մարմինների,հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մեղանիզմների ստեղծումը:

9. Հանձնաժողովը քննարկում և ընդունում է խորհրդատվական բնույթի որոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1) արդյունավետ գենդերային քաղաքականության իրականացում,

2)հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում,

3) տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների գենդերային հիմնախնդիրներին առնչվող գիտելիքների և իրազեկվածության մակարդակի բարձրացում,

4) գենդերային հիմնախնդիրների լուծման գործընթացում զանգվածային լրատվամիջոցների դերի բարձրացում:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Հանձնաժողովը կազմված է նախագահից,անդամներից և քարտուղարից,որոնք հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:Հանձնաժողովում կարող են ընդգրկվել առավելագույնը 11 անդամ:

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով,որոնք գումարվում են հանձնաժողովի նախագահի կողմից,ըստ անհրաժեշտության,բայց ոչ պակաս,քան յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:Ըստ անհրաժեշտության, հանձնաժողովի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

12.Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

13.Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից մեկը:

14.Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, նիստերի մասնակիցների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
15.Հանձնաժողովի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերով տրամադրվում է հանձնաժողովի անդամներին՝ գումարվող նիստից առնվազն 2 օր առաջ:
16.Հանձնաժողովի նիստերն սկսվում են նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ:
17. Հանձնաժողովի որոշումներն ստորագրում է հանձնաժողովին նախագահը:
18.Հանձնաժողովի նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

19.Հանձնաժողովի նախագահը `
1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.
2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը.
3) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.
4) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում.
5) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում օրակարգը:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

20.Հանձնաժողովի անդամները՝
1) իրավունք ունեն՝
ա) հարցեր ներկայացնելու հանձնաժողովի քննարկմանը.
բ) առաջարկություններ ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.
գ) հանձնաժողովի որոշումների վերաբերյալներկայացնելու հատուկ կարծիք.
դ)ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.
2)պարտավոր են՝
ա. մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին,
բ.կատարել հանձնաժողովի որոշումները և նրա նախագահի հանձնարարականները:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

21.Հանձնաժողովի քարտուղարը՝
1) արձանագրում է հանձնաժողովի նիստերը և կազմում հանձնաժողովի որոշումներին նախագծերը.
2) նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգին վերաբերվող համապատասխան նյութերի տրամադրումը հանձնաժողովի անդամներին.
3)հետևում է հանձնաժողովի որոշումներիկատարմանը և հանձնաժողովի նիստերում զեկուցում դրանց կատարման մասին.
4)վարում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը.
5)իրականացնում է հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները:

7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

22.Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի որոշմամբ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան